ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԿԳՄՆՄԱԱՊՁԲ-25/53

ք. Երևան «___» _____ 2025թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արթուր Գալստյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից ավելի**:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել Հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անՀատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անՀատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել Հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից ավելի**,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին Հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև Հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին Հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 19268000 (տասնինը միլիոն երկու հարյուր վաթսունութ հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **6 աշխատանքային օրվա** ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը

ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխՀատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական Հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական Հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ Ն Ո Ր Դ	**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900001023879, ՀՎՀՀ 02698732	«Էդիթ Պրինտ» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երևան, Դավիթ Մալյան 43, Հեռ.՝ (+374) 10-52-08-48, (+374) 91-20-93-56 Էլ. փոստ՝ ac@editprint.am «Արմսվիսբանկ» ՓԲԸ, Հ/Հ 25000118400210, ՀՎՀՀ 00009253
Գլխավոր բուհպետ՝ HAKOBYAN HASMIK 5610800161 Подписано цифровой подписью: HAKOBYAN HASMIK 5610800161 DN: c=AM, sn=••••••••, givenName=••••••, serialNumber=5bdc672203a3, cn=HAKOBYAN HASMIK 5610800161 Дата: 2025.06.12 14:51:50 +04'00' **Հ. Հակոբյան** (ստորագրություն) Կ.Տ.	**Տնօրեն՝** GALSTYAN ARTUR 1203720289 Digitally signed by GALSTYAN **Ա. Գալստյան** (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« » 2025թ կնքված
ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-25/53 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքի						
		Անվանումը	**Տեխնիկական բնութագիրը**	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը, ՀՀ դրամ	Ընդհանուր գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետը
1	**22111110/31**	**Դասագրքեր-1**	Գնման առարկա է հանդիսանում. **«Այբբենարան 1» դասագիրք,** հեղ.՝ **Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան** **Բովանդակային չափանիշներ** Պատկերազարդ Այբբենարանում նախատեսված է հանրակրթական դպրոցի առաջին դասարանի աշակերտների համար: Գրքում տառ-հնչյունների ուսուցմանը զուգահեռ ուսուցնվում է բառակազմությունը՝ պարզ և բարդ վանկերի բաժանման միջոցով: Գրքում առկա են տարբեր խաղ-առաջադրանքներ՝ պատմողական և հիշողությունը զարգացնելու համար ներառված փոքր բանաստեղծություններ: Ուսումնական ընթացքն ավելի հետաքրքրաշարժ դարձնելու համար գրքում ներառված են հանելուկներ, շուտասելուկներ և խաչբառեր: Առկա են նաև հետայբբենական շրջանի համար նախատեսված նյութեր՝ երգեր և բանաստեղծություններ: **Տեխնիկական չափանիշները** *Չափսը*՝ 20 x 26 *Տեքստի թուղթը*՝ 80գր, օֆսեթ *Տեքստի գույները*՝ 4 + 4 *Էջերի քանակը*՝ 128 *Կազմի թուղթը*՝ ֆուտբորտ 270 գ/քմ *Կազմի գույները*՝ 4+0 *Կազմարարություն*՝ թելակար, լամինացիա ջերմասոսինձ	**հատ**	**2503**	**2500**	**6257500**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը

2	**22111110/42**	**Դասագրքեր-2**	Գնման առարկա է հանդիսանում. **«Մայրենի 1» /դասագիրք/,** հեղ.՝ **Ա.Քյուրքչյան, L. Տեր-Գրիգորյան** **Բովանդակային չափանիշներ** Պատկերազարդ դասագիրք հանրակրթական դպրոցի առաջին դասարանի համար: Դասագրքում ներառված են բանաստեղծություններ և պատմություններ, որոնց միջողով աշակերտն ամրապնդում է լեզվի իմացությունը: Յուրաքանչյուր դասի վերջում կան նյութն ամրապնդելու համար նախատեսված հարցեր, առաջադրանքներ և արտագրության համար նախատեսված փոքր նյութեր: Աշակերտների ուսուցման պրոցեսն ու տրամաբանական մտածողությունը զարգացնելու համար գրքում ներառված են հանելուկներ, ասացվածքներ, շուտասելուկներ և սուտասելուկներ: **Տեխնիկական չափանիշները** *Չափը՝* 20 x 26 *Տեքստի թուղթը՝* 80գր, օֆսեթ *Տեքստի գույները՝* 4 + 4 *Էջերի քանակը՝* 64 *Կազմի թուղթը՝* ֆուտբորտ 270 գ/քմ *Կազմի գույները՝* 4+0 *Կազմարարություն՝* թելակար, լամինացիա ջերմասոսինձ	**հատ**	**800**	**2500**	**2000000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը
3	**22111110/43**	**Դասագրքեր-3**	Գնման առարկա է հանդիսանում. **«Մայրենի 2» /2-րդ դասարանի դասագիրք/ ՄԱՍ 1,** հեղ.՝ **Ա. Արնաուդյան, Մ. Մանուկյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրքը նախատեսված է երկրորդ դասարանի աշակերտների համար: Պատկերազարդ դասագիրք հանրակրթական դպրոցի երկրորդ դասարանի առաջին կիսամյակի համար է: Մեթոդական սկզբունքներով և բովանդակությամբ «Մայրենի 1»-ի շարունակությունն է: **Տեխնիկական չափանիշները** *Չափը՝*16.5 x 24 *Տեքստի թուղթը՝*70գր, օֆսեթ *Տեքստի գույները՝* 4 + 4	**հատ**	**600**	**1500**	**900000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը

			Էջերի քանակը՝ 80 *Կազմի թուղթը*՝ ֆուտբորտ 250 գ/քմ *Կազմի գույները*՝ 4+0 *Կազմարարություն*՝ թելակար, լամինացիա ջերմասոսինձ					
4	**22111110/44**	**Դասագրքեր-4**	Գնման առարկա է հանդիսանում. **«Մայրենի 2» /2-րդ դասարանի դասագիրք/ ՄԱՍ 2,** հեղ.՝ **Ա. Արնաուդյան, Մ. Մանուկյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրքը նախատեսված է երկրորդ դասարանի աշակերտների համար: Պատկերազարդ դասագիրք հանրակրթական դպրոցի երկրորդ դասարանի երկրորդ կիսամյակի համար է: Մեթոդական սկզբունքներով և բովանդակությամբ «Մայրենի 1»-ի և «Մայրեի 2»-ի առաջին մասի շարունակությունն է: **Տեխնիկական չափանիշները** *Չափսը*՝16.5 x 24 *Տեքստի թուղթը*՝70գր, օֆսեթ *Տեքստի գույները*՝ 4 + 4 *Էջերի քանակը*՝ 96 *Կազմի թուղթը*՝ ֆուտբորտ 250 գ/քմ *Կազմի գույները*՝ 4+0 *Կազմարարություն*՝ թելակար, լամինացիա ջերմասոսինձ	**հատ**	**600**	**1500**	**900000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը
5	**22111110/45**	**Դասագրքեր-5**	Գնման առարկա է հանդիսանում **«Մայրենի 3» /3-րդ դասարանի դասագիրք/ ՄԱՍ 1,** հեղ.՝ **Դ.Գյուրջինյան, Ն.Հեքեքյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրքը նախատեսված է երրորդ դասարանի աշակերտների համար: Գրքում ուսումնական նյութերը բաժանված են ըստ թեմատիկաների: Բուն ուսումնական նյութին առնչվող հարցերից ու առաջադրանքներից բացի յուրաքանչյուր նյութի վերջում առկա են բառերի, պատմության գանձատուփեր, իմաստունի օրատետրից, զրույցներից, խորհուրդները, տատիկի խորհուրդները, Ինչուիկի ու Գիտունիկի զրույցներն ու նամակները վերնագրերով հավելյալ նյութեր,ասացվածքներ, հանելուկներ, բառախաղեր ու սուտասելուկներ, որոնք միտված են ավելի ընդլայնել աշակերտի իմացության ու տրամաբանության սահմանները:	**հատ**	**500**	**1500**	**750000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը

			Դասագրքի վերջում առկա են ամփոփիչ հարցեր ու ուղղագրական բառարան: **Տեխնիկական չափանիշները** *Չափսը*՝16.5 x 24 *Տեքստի թուղթը*՝70գր, օֆսեթ *Տեքստի գույները*՝ 4 + 4 *Էջերի քանակը*՝ 88 *Կազմի թուղթը*՝ ֆուտբորտ 270 գ/քմ *Կազմի գույները*՝ 4+0 *Կազմարարություն*՝ թելակար, լամինացիա ջերմասոսինձ					
6	**22111110/46**	**Դասագրքեր-6**	Գնման առարկա է հանդիսանում **«Մայրենի 3» /3-րդ դասարանի դասագիրք/ ՄԱՍ 2,** հեղ.՝ **Դ.Գյուրջինյան, Ն.Հեքեքյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրքը նախատեսված է երրորդ դասարանի աշակերտների համար: Գրքում ուսումնական նյութերը բաժանված են ըստ թեմատիկաների: Բուն ուսումնական նյութին առնչվող հարցերից ու առաջադրանքներից բացի յուրաքանչյուր նյութի վերջում առկա են բառերի, պատմության գանձատուփեր, իմաստունի օրատետրից, զրույցներից, խորհուրդները, տատիկի խորհուրդները, Ինչուիկի ու Գիտունիկի զրույցներն ու նամակները վերնագրերով հավելյալ նյութեր,ասացվածքներ, հանելուկներ, բառախաղեր ու սուտասելուկներ, որոնք միտված են ավելի ընդլայնել աշակերտի իմացության ու տրամաբանության սահմանները: Դասագրքի վերջում առկա են ամփոփիչ հարցեր ու ուղղագրական բառարան: **Տեխնիկական չափանիշները** *Չափսը*՝16.5 x 24 *Տեքստի թուղթը*՝70գր, օֆսեթ *Տեքստի գույները*՝ 4 + 4 *Էջերի քանակը*՝ 80 *Կազմի թուղթը*՝ ֆուտբորտ 270 գ/քմ *Կազմի գույները*՝ 4+0 *Կազմարարություն*՝ թելակար, լամինացիա ջերմասոսինձ	**հատ**	**500**	**1500**	**750000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը

7	**22111110/47**	**Դասագրքեր-7**	Գնման առարկա է հանդիսանում. **«Մայրենի 4» /4-րդ դասարանի դասագիրք/ ՄԱՍ 1,** հեղ.՝ **Դ.Գյուրջինյան, Ն.Հեքեքյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագրքերը նախատեսված են չորրորդ դասարանի առաջին կիսամյակի համար: Գրքում ուսումնական նյութերը բաժանված են ըստ թեմատիկաների: Բուն ուս. նյութին առնչվող հարցերից ու առաջադրանքներից բացի յուր. նյութի վերջում առկա են բառերի, պատմության և զրույցների գանձատուփեր, պատմության և հեքիաթների զամբյուղ, Լեզվաբանի դասը, իմաստունի օրատետրից, Իմաստունի և տատիկի խորհուրդները վերնագրերով հավելյալ նյութեր, ասացվածքներ հանելուկներ, բառախաղեր ու սուտասելուկներ, որոնք միտված են ավելի ընդլայնել աշակերտի իմացության ու տրամաբանության սահմանները: Դասագրքի վերջում առկա են քերականական ամփոփ տեղեկատուներ և ուղղագրական բառարան: **Տեխնիկական չափանիշները** *Չափսը*՝ 16.5 x 24 *Տեքստի թուղթը*՝ 70գր, օֆսեթ *Տեքստի գույները*՝ 4 + 4 *Էջերի քանակը*՝ 96 *Կազմի թուղթը*՝ ֆուտբորտ 270 գ/քմ *Կազմի գույները*՝ 4+0 *Կազմարարություն*՝ թելակար, լամինացիա ջերմասոսինձ	**հատ**	**400**	**1500**	**600000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը
8	**22111110/48**	**Դասագրքեր-8**	Գնման առարկա է հանդիսանում. **«Մայրենի 4» /4-րդ դասարանի դասագիրք/ ՄԱՍ 2,** հեղ.՝ **Դ.Գյուրջինյան, Ն.Հեքեքյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագրքերը նախատեսված են չորրորդ դասարանի երկրորդ կիսամյակի համար: Գրքում ուսումնական նյութերը բաժանված են ըստ թեմատիկաների: Բուն ուս. նյութին առնչվող հարցերից ու առաջադրանքներից բացի յուր. նյութի վերջում առկա են բառերի, պատմության և զրույցների գանձատուփեր, պատմության և հեքիաթների զամբյուղ, Լեզվաբանի դասը, իմաստունի օրատետրից, Իմաստունի և տատիկի խորհուրդները վերնագրերով	**հատ**	**230**	**1500**	**345000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը

			հավելյալ նյութեր, ասացվածքներ հանելուկներ, բառախաղեր ու սուտասելուկներ, որոնք միտված են ավելի ընդլայնել աշակերտի իմացության ու տրամաբանության սահմանները: Դասագրքի վերջում առկա են քերականական ամփոփ տեղեկատուներ և ուղղագրական բառարան: **Տեխնիկական չափանիշները** *Չափսը*՝16.5 x 24 *Տեքստի թուղթը*՝70գր, օֆսեթ *Տեքստի գույները*՝ 4 + 4 *Էջերի քանակը*՝112 *Կազմի թուղթը*՝ ֆուտբորտ 270 գ/քմ *Կազմի գույները*՝ 4+0 *Կազմարարություն*՝ թելակար, լամինացիա ջերմասոսինձ					
9	**22111110/50**	**Դասագրքեր-9**	Գնման առարկա է հանդիսանում. **«Մայրենի 1» /դասագիրք/, արևմտահայերեն,** հեղ.՝ **Ա.Քյուրքչյան, L. Տեր-Գրիգորյան** **Բովանդակային չափանիշներ** Պատկերազարդ դասագիրք հանրակրթական դպրոցի առաջին դասարանի համար: Դասագրքում ներառված են բանաստեղծություններ և պատմություններ, որոնց միջողով աշակերտն ամրապնդում է լեզվի իմացությունը: Յուրաքանչյուր դասի վերջում կան նյութն ամրապնդելու համար նախատեսված հարցեր, առաջադրանքներ և արտագրության համար նախատեսված փոքր նյութեր: Աշակերտների ուսուցման պրոցեսն ու տրամաբանական մտածողությունը զարգացնելու համար գրքում ներառված են հանելուկներ, ասացվածքներ, շուտասելուկներ և սուտասելուկներ: **Տեխնիկական չափանիշները** *Չափսը*՝ 20 x 26 *Տեքստի թուղթը*՝ 80գր, օֆսեթ *Տեքստի գույները*՝ 4 + 4 *Էջերի քանակը*՝ 56 *Կազմի թուղթը*՝ ֆուտբորտ 270 գ/քմ *Կազմի գույները*՝ 4+0 *Կազմարարություն*՝ թելակար, լամինացիա ջերմասոսինձ	**հատ**	**97**	**2500**	**242500**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը

10	**22811130/6**	**Տետրեր-1**	Գնման առարկա է հանդիսանում **«Իմ առաջին տետրը 1.1»,** հեղ.՝ **Ա.Քյուրքչյան** **Բովանդակային չափանիշներ** Աշխատանքային տետրը նպատակ ունի երեխային նախապատրաստելու գրուսուցմանը: Տետրի յուրաքանչյուր էջ բաղկացած է երկու մասից: Առաջին մասում թեմատիկ նկարներ են, որոնց շուրջ պետք է պատմություններ հյուսվեն, գունավորվեն ու գծվեն: Էջի երկրորդ հատվածում նշված աշխատանքները նպաստում են տողի վրա աշխատելու կարողությունների ձևաորմանը, իսկ գծելու կամ գրելու համար նախատեսվող մասնիկներն ու գծերը նպաստում են տառերի գրության ուսուցմանը: Հանձնարարվող աշխատանքները նպաստում են են աշակերտի պատկերավոր մտածողությունից, տարածական կողմնորոշումից մինչև ձեռքի մանր մկանային համակարգի աշխատանքի զարգացմանը: **Տեխնիկական չափանիշները** *Չափսը*՝ 16.5 x 24 *Տեքստի թուղթը*՝ 70գր, օֆսեթ *Տեքստի գույները*՝ 2 + 2 *Էջերի քանակը*՝ 32 *Կազմի թուղթը*՝ Կավճ. 115 գ/քմ *Կազմի գույները*՝ 4+1 *Կազմարարություն*՝ մետաղալար	**հատ**	**2500**	**250**	**625000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը
11	**22811130/7**	**Տետրեր-2**	Գնման առարկա է հանդիսանում **«Իմ առաջին տետրը 1.2»,** հեղ.՝ **Ա.Քյուրքչյան** **Բովանդակային չափանիշներ** Աշխատանքային տետրերը նախատեսված են գրուսուցման համար և համապատասխանում են գրաճանաչության այբբենական շրջանի երեք փուլերին: Յուրաքանչյուր էջումառաջարկվում է աշխատանքների երկու փունջ՝ հիմնական և լրացուցիչ, ընդ որում՝ առաջինը պարտադիր է բոլոր աշակերտների համար, իսկ երկրորդը կարելի է հանձնարարել՝ անհատական մոտեցում ցուցաբերելով յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ: Առաջին փուլում նախատեսվում են տառեր, երբեմն՝ նաև բառեր, երկրորդ փուլում՝ բառեր և բառակապակցություններ, երրորդ փուլում՝ նախադասություններ կամ փոքրիկ տեքստեր: Աշակերտը պետք է սովորի տառի գրությունը, լրացնի բաց	**հատ**	**2500**	**250**	**625000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը

			թողնված տառերը, կատարի բառակազմական աշխատանքներ բառ-բառ, բառ-պատկեր սկզբունքներով: Ներառված են նաև արտագրության համար հատվածներ: Յուրաքնչյուր էջի վերջում նշված է հանձնարարականը, որով աշակերտը պետք է առաջնորդվի իր աշխատանքը կատարելիս: Տետրում ներառված են նաև գունավորման աշխատանքներ, որոնք պարտադիր չեն և կարելի է թողնել երեխայի հայեցողությանը: **Տեխնիկական չափանիշները** *Չափսը՝* 16.5 x 24 *Տեքստի թուղթը՝* 70գր, օֆսեթ *Տեքստի գույները՝* 2 + 2 *Էջերի քանակը՝* 32 *Կազմի թուղթը՝* Կավճ. 115 գ/քմ *Կազմի գույները՝* 4+1 *Կազմարարություն՝* մետաղալար					
12	**22811130/8**	**Տետրեր-3**	Գնման առարկա է հանդիսանում **«Իմ առաջին տետրը 1.3»,** հեղ.՝ **Ա.Քյուրքչյան** **Բովանդակային չափանիշներ** Աշխատանքային տետրերը նախատեսված են գրուսուցման համար և համապատասխանում են գրաճանաչության այբբենական շրջանի երեք փուլերին: Յուրաքանչյուր էջումառաջարկվում է աշխատանքների երկու փունջ՝ հիմնական և լրացուցիչ, ընդ որում՝ առաջինը պարտադիր է բոլոր աշակերտների համար, իսկ երկրորդը կարելի է հանձնարարել՝ անհատական մոտեցում ցուցաբերելով յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ: Առաջին փուլում նախատեսվում են տառեր, երբեմն՝ նաև բառեր, երկրորդ փուլում՝ բառեր և բառակապակցություններ, երրորդ փուլում՝ նախադասություններ կամ փոքրիկ տեքստեր: Աշակերտը պետք է սովորի տառի գրությունը, լրացնի բաց թողնված տառերը, կատարի բառակազմական աշխատանքներ բառ-բառ, բառ-պատկեր սկզբունքներով: Ներառված են նաև արտագրության համար հատվածներ: Յուրաքնչյուր էջի վերջում նշված է հանձնարարականը, որով աշակերտը պետք է առաջնորդվի իր աշխատանքը կատարելիս: Տետրում ներառված են նաև գունավորման աշխատանքներ,	**հատ**	**2500**	**250**	**625000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը

			որոնք պարտադիր չեն և կարելի է թողնել երեխայի հայեցողությանը: **Տեխնիկական չափանիշները** *Չափը՝* 16.5 x 24 *Տեքստի թուղթը՝* 70գր, օֆսեթ *Տեքստի գույները՝* 4 + 4 *Էջերի քանակը՝* 32 *Կազմի թուղթը՝* Կավճ. 115 գ/քմ *Կազմի գույները՝* 4+1 *Կազմարարություն՝* մետաղալար					
13	**22811130/9**	**Տետրեր-4**	Գնման առարկա է հանդիսանում **«Իմ առաջին տետրը 1.4»,** հեղ.՝ **Ա.Քյուրքչյան** **Բովանդակային չափանիշներ** Աշխատանքային տետրերը նախատեսված են գրուսուցման համար և համապատասխանում են գրաճանաչության այբբենական շրջանի երեք փուլերին: Յուրաքանչյուր էջումառաջարկվում է աշխատանքների երկու փունջ՝ հիմնական և լրացուցիչ, ընդ որում՝ առաջինը պարտադիր է բոլոր աշակերտների համար, իսկ երկրորդը կարելի է հանձնարարել՝ անհատական մոտեցում ցուցաբերելով յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ: Առաջին փուլում նախատեսվում են տառեր, երբեմն՝ նաև բառեր, երկրորդ փուլում՝ բառեր և բառակապակցություններ, երրորդ փուլում՝ նախադասություններ կամ փոքրիկ տեքստեր: Աշակերտը պետք է սովորի տառի գրությունը, լրացնի բաց թողնված տառերը, կատարի բառակազմական աշխատանքներ բառ-բառ, բառ-պատկեր սկզբունքներով: Ներառված են նաև արտագրության համար հատվածներ: Յուրաքնչյուր էջի վերջում նշված է հանձնարարականը, որով աշակերտը պետք է առաջնորդվի իր աշխատանքը կատարելիս: Տետրում ներառված են նաև գունավորման աշխատանքներ, որոնք պարտադիր չեն և կարելի է թողնել երեխայի հայեցողությանը: **Տեխնիկական չափանիշները** *Չափը՝* 16.5 x 24 *Տեքստի թուղթը՝* 70գր, օֆսեթ *Տեքստի գույները՝* 2 +2 *Էջերի քանակը՝* 32	**հատ**	**2500**	**250**	**625000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը

			Կազմի թուղթը՝ Կավճ. 115 գ/քմ *Կազմի գույները*՝ 4+1 *Կազմարարություն*՝ մետաղալար					
14	**22811130/20**	**Տետրեր-5**	Գնման առարկա է հանդիսանում **«Հետաքրքրաշատ մայրենի»,** հեղ.՝ **Ա.Միքայելյան, Ա.Ավագյան, Լ.Ավագյան, Տ.Ենոքյան** **Բովանդակային չափանիշներ** Ձեռնարկը հասցեագրված է տարրական դպրոցի աշակերտներին, ուսուցիչներին, ինչպես նաև հատուկ մանկավարժներին և նպատակաուղղված է կրտսեր դպրոցականի բառապաշարի զարգացմանը, լեզվական տարրական գիտելիքների ձեռքբերմանը, ճիշտ և գրագետ կապակցված բանավոր և գրավոր խոսք կառուցելուն: **Տեխնիկական չափանիշները** *Չափը*՝16.5 x 24 *Տեքստի թուղթը*՝70գր, օֆսեթ *Տեքստի գույները*՝ 4 + 4 *Էջերի քանակը*՝72 *Կազմի թուղթը*՝ ֆուտբորտ 250 գ/քմ *Կազմի գույները*՝4+0 *Կազմարարություն*՝թելակար, լամինացիա ջերմասոսինձ	**հատ**	**800**	**450**	**360000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը
15	**22811130/21**	**Տետրեր-6**	Գնման առարկա է հանդիսանում **«Մայրենի 2. Աշխատանքային տետր 1»,** հեղ.՝ **Ա. Արնաուդյան, Մ. Մանուկյան:** **Բովանդակային չափանիշներ** Պատկերազարդ տետրը նախատեսված է «Մայրենի 2» դասագրքին զուգահեռ գործածելու համար: Պարունակում է լեզվական և տրամաբանական բազմազան առաջադրանքներ: **Տեխնիկական չափանիշները** *Չափը*՝16.5 x 24 *Տեքստի թուղթը*՝70գր, օֆսեթ *Տեքստի գույները*՝ 4 + 4 *Էջերի քանակը*՝32 *Կազմի թուղթը*՝ ֆուտբորտ 250 գ/քմ *Կազմի գույները*՝4+0 *Կազմարարություն*՝ մետաղալար	**հատ**	**600**	**450**	**270000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը

16	**22811130/22**	**Տետրեր-7**	Գնման առարկա է հանդիսանում **«Մայրենի 2. Աշխատանքային տետր 2»,** հեղ.՝ **Ա. Արնաուդյան, Մ. Մանուկյան:** **Բովանդակային չափանիշներ** Պատկերազարդ տետրը նախատեսված է «Մայրենի 2» դասագրքին զուգահեռ գործածելու համար: Պարունակում է լեզվական և տրամաբանական բազմազան առաջադրանքներ: **Տեխնիկական չափանիշները** *Չափը*՝16.5 x 24 *Տեքստի թուղթը*՝70գր, օֆսեթ *Տեքստի գույները*՝ 4 + 4 *Էջերի քանակը*՝ 32 *Կազմի թուղթը*՝ ֆուտբորտ 250 գ/քմ *Կազմի գույները*՝ 4+0 *Կազմարարություն*՝ մետաղալար	**հատ**	**600**	**450**	**270000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը
17	**22811130/24**	**Տետրեր-8**	Գնման առարկա է հանդիսանում. **«Աղբյուր» /դասագիրք-տետր/ արևմտահայերեն,** հեղ.՝ **Ա. Աբրահամյան, Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան** **Բովանդակային չափանիշներ** «Աղբյուր» գիրք-տետրը նախատեսված է 5-6 տարեկան երեխաների համար: Այն ընդգրկում է վեցական էջից կազմված 22 թեմատիկ միավորներ, որոնցից յուրաքանչյուրում երեք էջ հատկացված է մայրենի լեզվին, երկու էջ՝ մաթեմատիկային, մեկ էջ՝ ընդհանուր ամփոփմանը: «Աղբյուրը» կնպաստի երեխայի բառապաշարի հարստացմանը, մտածողության ու տրամաբանության զարգացմանը, լեզվական, մաթեմատիկական և ճանաչողական բազմակողմանի գիտելիքներ կհաղորդի երեխային, ձեռքը կվարժեցնի գրելուն: **Տեխնիկական չափանիշները** *Չափը*՝20 x 26 *Տեքստի թուղթը*՝70գր, օֆսեթ *Տեքստի գույները*՝4 +4 *Էջերի քանակը*՝ 160 *Կազմի թուղթը*՝ ֆուտբորտ 250 գ/քմ *Կազմի գույները*՝ 4+0 *Կազմարարություն*՝ թելակար, լամինացիա ջերմասոսինձ	**հատ**	**100**	**2500**	**250000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը

18	**22111100/2**	**Ուսուցողական գրքեր-1**	Գնման առարկա է հանդիսանում **«Այբբենարան 1» /ուսուցչի ձեռնարկ/,** հեղ.՝ **Ա.Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան** **Բովանդակային չափանիշներ** Ուղեցույցի հեղինակներն առաջարկում են գրաճանաչությունը երեք փուլով անցնելու եղանակը՝ ա) նախապատրաստական կամ նախաայբբենական շրջան, բ) այբբենական կամ գրուսուցման շրջան, գ) հետայբբենական շրջան: Բուն գրուսուցման շրջանը բաժանված է երեք փուլի՝ հնչյունների արտասանության ու տառերի գրության բարդությանը և խոսքի մեջ գործածվելու հաճախությանը համապատասխան: «Այբբենարանն» ունի հավելված, որտեղ զետեղված են բանաստեղծություններ, պատմություններ, հեքիաթներ, երգեր և այլն: **Տեխնիկական չափանիշները** *Չափը*՝ 14.5 x 20 *Տեքստի թուղթը*՝ 70գր, օֆսեթ *Տեքստի գույները*՝ 1 + 1 *Էջերի քանակը*՝ 64 *Կազմի թուղթը*՝ ֆուտբորտ 250 գ/քմ *Կազմի գույները*՝ 4+0 *Կազմարարություն*՝ մետաղալար, լամինացիա	**հատ**	**300**	**1500**	**450000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը
19	**22111100/4**	**Ուսուցողական գրքեր-2**	Գնման առարկա է հանդիսանում **«Մայրենի 2. մեթոդական ձեռնարկ»,** հեղ.՝ **Ա. Արնաուդյան, Մ. Մանուկյան:** **Բովանդակային չափանիշներ** Սույն մեթոդական ձեռնարկը որոշակի ուղենիշ է «Մայրենի-2» առարկան դասավանդողների համար և նպատակ ունի նրանց աջակցելու նոր չափորոշչով, ըմբռնելու կրթական դաշտի նոր մարտահրավերներն ու առաջնահերթությունները, նպաստելու դասագիրքը հասկանալուն, ճիշտ և արդյունավետ գործադրելուն, սովորողների արդյունավետությունը բարձրացնելուն: Ձեռնարկում զետեղել ենք հետևյալ ենթաբաժինները. Բաժին 1. «Մայրենի-2»-ի առարկայական ծրագիր, Բաժին 2. Խաչվող հասկացություններ, Բաժին 3. «Մայրենի-2» դասագրքի կազմման սկզբունքներն ու առանձնահատկությունները, Բաժին 4. «Մայրենի-2»	**հատ**	**100**	**2280**	**228000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը

			դասագրքի բովանդակային քարտեզը, Բաժին 5. «Աշխատենք այսպես» (ուսուցման որոշ մեթոդներ և հնարներ), Բաժին 6. Գնահատում, Բաժին 7. Դասերի պլանավորման նմուշօրինակներ, Բաժին 8. Օրինակելի թեմատիկ պլանավորում: **Տեխնիկական չափանիշները** *Չափը՝* 14.5 x 20 *Տեքստի թուղթը՝* 70գր, օֆսեթ *Տեքստի գույները՝* 1 + 1 *Էջերի քանակը՝* 180 *Կազմի թուղթը՝* ֆուտբորտ 250 գ/քմ *Կազմի գույները՝* 4+0 *Կազմարարություն՝* լամինացիա ջերմասոսինձ					
20	**22111100/8**	**Ուսուցողական գրքեր-3**	Գնման առարկա է հանդիսանում **«Հայոց աշխարհ» դասագիրք-ընթերցարան /արևմտահայերեն/,** հեղ.՝ **Պ. Բեդիրյան:** **Բովանդակային չափանիշներ** Ընթերցարանը նախատեսված է Սփյուռքի արևմտահայերեն ուսուցումով հանրակրթական թե կիրակնօրյա դպրոցների 12-16 տարեկան աշակերտների (նաև հետաքրքրվող մեծերի) համար: Դասերի բուն, նաև լրացուցիչ բնագրերն աշակերտներին բավական գաղափար են տալիս Հայաստան աշխարհի, նրա անցյալի և ներկայի աչքի ընկնող մի շարք դրվագների, պատմական խոշոր դեմքերի և այլն մասին: Դասերի հետ կապված հարցերը կոչված են միաժամանակ զարգացնելու աշակերտների խոսքն ու միտքը: Դասագիրքն ունի քերականական կարևոր աղյուսակներ, որոնց համապատասխան կատարվելիք վարժությունները պետք է, որ աշակերտների խոսքն ուղղեն, շտկեն ու հղկեն: Ընթերցարանին կցված է «Խորհուրդներ ուսուցչին»-ը, որ մեթոդական պատշաճ խորհուրդներ է պարունակում: **Տեխնիկական չափանիշները** *Չափը՝* 16.5 x 24 *Տեքստի թուղթը՝* 70գր, օֆսեթ *Տեքստի գույները՝* 4+4 *Էջերի քանակը՝* 88 *Կազմի թուղթը՝* ֆուտբորտ 250 գ/քմ *Կազմի գույները՝* 4+0 *Կազմարարություն՝* լամինացիա ջերմասոսինձ	**հատ**	**100**	**1950**	**195000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը

21	**22111100/15**	**Ուսուցողական գրքեր-4**	Գնման առարկա է հանդիսանում **«Հայրենագիտության դասընթաց» /խումբ 1/,** հեղ.՝ **Ա. Բալայան:** **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է Սփյուռքի հայկական դպրոցների համար: Ժողովածուն կազմված է ճկուն - շարժական սկզբունքով՝ նպատակ ունենալով հայի ու հայկականի մասին գիտելիքներ, արժեքներ ու վերաբերմունք ձևավորելու բոլոր նրանց մեջ, ովքեր ապրում են հեռու, բայց ուզում են մոտենալ Հայաստանին ու հայկականին, իրենց արմատներին... Առանձին ուսումնական նյութեր տեղաշարժելով ըստ հայերենի տիրապետման մակարդակի (կամ ըստ տարիքի) խմբերում՝ հնարավոր կլինի մասնակիցների մեջ սերմանել, զարգացնել ու պահպանել ազգային ինքնության, լեզվի, պատմության, մշակույթի ու արվեստի մասին պատկերացումներ: **Տեխնիկական չափանիշները** *Չափը*՝16.5 x 24 *Տեքստի թուղթը*՝70գր, օֆսեթ *Տեքստի գույները*՝ 4 + 4 *Էջերի քանակը*՝ 64 *Կազմի թուղթը*՝ ֆուտբորտ 250 գ/քմ *Կազմի գույները*՝ 4+0 *Կազմարարություն*՝ լամինացիա ջերմասոսինձ	**հատ**	**500**	**1000**	**500000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը
22	**22111100/16**	**Ուսուցողական գրքեր-5**	Գնման առարկա է հանդիսանում **«Հայրենագիտության դասընթաց» /խումբ 2/,** հեղ.՝ **Ա. Բալայան:** **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է Սփյուռքի հայկական դպրոցների համար: Ժողովածուն կազմված է ճկուն - շարժական սկզբունքով՝ նպատակ ունենալով հայի ու հայկականի մասին գիտելիքներ, արժեքներ ու վերաբերմունք ձևավորելու բոլոր նրանց մեջ, ովքեր ապրում են հեռու, բայց ուզում են մոտենալ Հայաստանին ու հայկականին, իրենց արմատներին... Առանձին ուսումնական նյութեր տեղաշարժելով ըստ հայերենի տիրապետման մակարդակի (կամ ըստ տարիքի) խմբերում՝ հնարավոր կլինի մասնակիցների մեջ սերմանել, զարգացնել ու պահպանել ազգային ինքնության, լեզվի, պատմության, մշակույթի ու արվեստի մասին	**հատ**	**500**	**1000**	**500000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը

			պատկերացումներ: **Տեխնիկական չափանիշները** *Չափսը*՝16.5 x 24 *Տեքստի թուղթը*՝70գր, օֆսեթ *Տեքստի գույները*՝ 4 + 4 *Էջերի քանակը*՝ 68 *Կազմի թուղթը*՝ ֆուտբորտ 250 գ/քմ *Կազմի գույները*՝ 4+0 *Կազմարարություն*՝ լամինացիա ջերմասոսինձ					
23	**22111100/17**	**Ուսուցողական գրքեր-6**	Գնման առարկա է հանդիսանում **«Հայրենագիտության դասընթաց» /խումբ 3/,** հեղ.՝ **Ա. Բալայան:** **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է Սփյուռքի հայկական դպրոցների համար: Ժողովածուն կազմված է ճկուն - շարժական սկզբունքով՝ նպատակ ունենալով հայի ու հայկականի մասին գիտելիքներ, արժեքներ ու վերաբերմունք ձևավորելու բոլոր նրանց մեջ, ովքեր ապրում են հեռու, բայց ուզում են մոտենալ Հայաստանին ու հայկականին, իրենց արմատներին... Առանձին ուսումնական նյութեր տեղաշարժելով ըստ հայերենի տիրապետման մակարդակի (կամ ըստ տարիքի) խմբերում՝ հնարավոր կլինի մասնակիցների մեջ սերմանել, զարգացնել ու պահպանել ազգային ինքնության, լեզվի, պատմության, մշակույթի ու արվեստի մասին պատկերացումներ: **Տեխնիկական չափանիշները** *Չ Չափսը*՝16.5 x 24 *Տեքստի թուղթը*՝70գր, օֆսեթ *Տեքստի գույները*՝ 4 + 4 *Էջերի քանակը*՝ 52 *Կազմի թուղթը*՝ ֆուտբորտ 250 գ/քմ *Կազմի գույները*՝ 4+0 *Կազմարարություն*՝ լամինացիա ջերմասոսինձ	**հատ**	**500**	**1000**	**500000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը
24	**22111100/18**	**Ուսուցողական գրքեր-7**	Գնման առարկա է հանդիսանում **«Հայրենագիտության դասընթաց» /խումբ 4/,** հեղ.՝ **Ա. Բալայան:** **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է Սփյուռքի հայկական դպրոցների համար: Ժողովածուն կազմված է ճկուն - շարժական սկզբունքով՝	**հատ**	**500**	**1000**	**500000**	Մինչև 2025թ. օգոստոսի 15-ը

			նպատակ ունենալով հայի ու հայկականի մասին գիտելիքներ, արժեքներ ու վերաբերմունք ձևավորելու բոլոր նրանց մեջ, ովքեր ապրում են հեռու, բայց ուզում են մոտենալ Հայաստանին ու հայկականին, իրենց արմատներին... Առանձին ուսումնական նյութեր տեղաշարժելով ըստ հայերենի տիրապետման մակարդակի (կամ ըստ տարիքի) խմբերում՝ հնարավոր կլինի մասնակիցների մեջ սերմանել, զարգացնել ու պահպանել ազգային ինքնության, լեզվի, պատմության, մշակույթի ու արվեստի մասին պատկերացումներ: **Տեխնիկական չափանիշները** *Չափսը*՝16.5 x 24 *Տեքստի թուղթը*՝70գր, օֆսեթ *Տեքստի գույները*՝ 4 + 4 *Էջերի քանակը*՝ 52 *Կազմի թուղթը*՝ ֆուտբորտ 250 գ/քմ *Կազմի գույները*՝ 4+0 *Կազմարարություն*՝ լամինացիա ջերմասոսինձ					

**** 1-ից 24-րդ չափաբաժինների համար.***

1. *Ապրանքները ի պահ են հանձնվում «Էդիտ Պրինտ» ՍՊԸ-ի մոտ՝ մինչև Պատվիրատուի կողմից համապատասխան պահման վայրի հասցեի տրամադրումը: Պահման վայրի հասցեն տրամադրելուց հետո ապրանքների տեղափոխումը և բեռնաթափումը իրականացվում է Կատարողի կողմից:*
2. *Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:*
3. *Բոլոր միավոր ապրանքները 1-ին կամ 2-րդ էջում պետք է ունենան **«Վաճառքի ենթակա չէ»** նշումը: Նշումը կարող է կատարվել «Էդիտ Պրինտ» ՍՊԸ-ի համար ցանկացած ընդունելի տարբերակով (լինի տպագրած, կնքված, սոսնձված և այլն):*

HAKOBYAN HASMIK 5610800161

Подписано цифровой подписью: HAKOBYAN HASMIK 5610800161
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••••••, serialNumber=5bdc672203a3, cn=HAKOBYAN HASMIK 5610800161
Дата: 2025.06.12 14:52:18 +04'00'

ՀԱԿՈԲՅԱՆ

(ստորագրություն)

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

GALSTYAN ARTUR 1203720289 Digitally signed by

Ա. Գալստյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
« » 2025թ. կնքված
ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-25/53 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում.												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	22111110/31	Դասագրքեր-1	-	-	-	-	-	6257500	6257500	6257500	6257500	6257500	6257500	6257500	**6257500**
2	22111110/42	Դասագրքեր-2	-	-	-	-	-	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	2000000	**2000000**
3	22111110/43	Դասագրքեր-3	-	-	-	-	-	900000	900000	900000	900000	900000	900000	900000	**900000**
4	22111110/44	Դասագրքեր-4	-	-	-	-	-	900000	900000	900000	900000	900000	900000	900000	**900000**
5	22111110/45	Դասագրքեր-5	-	-	-	-	-	750000	750000	750000	750000	750000	750000	750000	**750000**
6	22111110/46	Դասագրքեր-6	-	-	-	-	-	750000	750000	750000	750000	750000	750000	750000	**750000**
7	22111110/47	Դասագրքեր-7	-	-	-	-	-	600000	600000	600000	600000	600000	600000	600000	**600000**
8	22111110/48	Դասագրքեր-8	-	-	-	-	-	345000	345000	345000	345000	345000	345000	345000	**345000**
9	22111110/50	Դասագրքեր-9	-	-	-	-	-	242500	242500	242500	242500	242500	242500	242500	**242500**
10	22811130/6	Տետրեր-1	-	-	-	-	-	625000	625000	625000	625000	625000	625000	625000	**625000**
11	22811130/7	Տետրեր-2	-	-	-	-	-	625000	625000	625000	625000	625000	625000	625000	**625000**
12	22811130/8	Տետրեր-3	-	-	-	-	-	625000	625000	625000	625000	625000	625000	625000	**625000**

13	**22811130/9**	**Տետրեր-4**	-	-	-	-	-	625000	625000	625000	625000	625000	625000	625000	**625000**
14	**22811130/20**	**Տետրեր-5**	-	-	-	-	-	360000	360000	360000	360000	360000	360000	360000	**360000**
15	**22811130/21**	**Տետրեր-6**	-	-	-	-	-	270000	270000	270000	270000	270000	270000	270000	**270000**
16	**22811130/22**	**Տետրեր-7**	-	-	-	-	-	270000	270000	270000	270000	270000	270000	270000	**270000**
17	**22811130/24**	**Տետրեր-8**	-	-	-	-	-	250000	250000	250000	250000	250000	250000	250000	**250000**
18	**22111100/2**	**Ուսուցողական գրքեր-1**	-	-	-	-	-	450000	450000	450000	450000	450000	450000	450000	**450000**
19	**22111100/4**	**Ուսուցողական գրքեր-2**	-	-	-	-	-	228000	228000	228000	228000	228000	228000	228000	**228000**
20	**22111100/8**	**Ուսուցողական գրքեր-3**	-	-	-	-	-	195000	195000	195000	195000	195000	195000	195000	**195000**
21	**22111100/15**	**Ուսուցողական գրքեր-4**	-	-	-	-	-	500000	500000	500000	500000	500000	500000	500000	**500000**
22	**22111100/16**	**Ուսուցողական գրքեր-5**	-	-	-	-	-	500000	500000	500000	500000	500000	500000	500000	**500000**
23	**22111100/17**	**Ուսուցողական գրքեր-6**	-	-	-	-	-	500000	500000	500000	500000	500000	500000	500000	**500000**
24	**22111100/18**	**Ուսուցողական գրքեր-7**	-	-	-	-	-	500000	500000	500000	500000	500000	500000	500000	**500000**

** Վճարման ենթակա գումարները կերակ պարզվում են սմհոսական կարգով:*

HAKOBYAN HASMIK 5610800161

Подписано цифровой подписью: HAKOBYAN HASMIK 5610800161
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••••, serialNumber=5bdc6722 03a3, cn=HAKOBYAN HASMIK 5610800161
Дата: 2025.06.12 14:52:48 +04'00'

ՀԱՐԿ

Հ. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ

61

ՎԱՃԱՌՈՂ

GALSTYAN ARTUR 1203720289

Digitally signed by GALSTYAN

Ա. Գալստյան

(ստորագրություն)

Կ.Տ